ՀՏԴ : 947.925

DOI: 10.54503/0135-0536-2026.2-213

# ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

*Բանալի բառեր՝ Մեծ Հայքի թագավորություն, Արշակունյաց հարստություն, Արշակ II, Պապ, եկեղեցի, ճգնաժամ, ապաքնակեցում, երաշտ, կլիմայի փոփոխություն, անկում:*

*Ամփոփում*

Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության անկումը 428 թ. գերազանցապես դիտարկվում է IV դ. երկրորդ կես – V դ. սկզբների աշխարհաքաղաքական և ներքին հակասությունների համատեքստում: Մինչդեռ Արշակունյաց գահի թուլացումը տարբեր գործոնների հետևանք էր: Մասնավորապես, կլիմայական և միջավայրային փոփոխությունները, որոնք փաստագրվել են հնակլիմայական և հնամիջավայրային տարաբնույթ հետազոտություններով, վկայում են տարածաշրջանում մոտ 350–450 թթ. ընթացքում տեղ գտած համընդգրկուն կլիմայական երևույթի մասին, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է «Ուշ հռոմեական գերերաշտ» անվանումը: Այս երևույթը, ըստ էության, էական դեր է ունեցել նաև Հայաստանում արձանագրված վայրընթաց զարգացումներում՝ նպաստելով տնտեսության քայքայմանն ու, որպես հետևանք, ներքին անկայունության և անջատողականության աճին, քաղաքային կյանքի անկմանն ու ապաքնակեցման երևույթներին հատկապես արքայական իշխանության հենարանը հանդիսացող արքունի ոստանում՝ Այրարատում: Իշխող արքայատան տնտեսական ու ռազմական ներուժի կտրուկ անկումը, ինչպես նաև արձանագրված համաճարակներն ու սովը, ի հավելումն՝ արտաքին բարդ քաղաքական դրությունն ու ռազմական ներխուժումները, խիստ բացասական ազդեցություն են ունեցել վերջին Արշակունիների վրա՝ հանգեցնելով արքայական իշխանության հեղինակազրկմանը, ինչին էլ, ի վերջո, հաջորդել է հայոց թագավորության լուծարումը սասանյան արքունիքի կողմից:

---

* Ներկայացվել է 15. IV. 2026 թ., գրախոսվել է 30. IV. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 24SSAH–6A019 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

*Նախաբան*

Պատմահայր Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» «Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց, եւ եպիսկոպոսապետութեանն յազգէ սրբոյն Գրիգորի» խորագրով գլխում նշում է հետևյալ միտքը. «… զի՞նչ, եթէ ոչ անտես առնել Աստուծոյ, եւ տարերց փոփոխել զբնութիւնս իւրեանց», ապա և թվարկում բնական մի շարք արհավիրքներ. «Գարուն երաշտացեալ, ամառն անձրեւայոյզ, աշուն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց, մրրկալից, յերկարացեալ. հողմք բքարարք, խորշակաբերք, ախտահաւաքք, ամպք հրընկէցք, կարկտածուք. անձրեւք անժամանակք եւ անպիտանք. օդք դառնաշունչք, եղեմնարկուք. ջրոց առաւելուլն անօգուտ եւ նուազելն անհնարաւոր. երկրի անբերութիւնք պտղոց եւ անաճելութիւնք կենդանեաց, այլ եւ սասանմունք եւ դղրդմունք», իսկ հետո, միառժամանակ անց, շարունակում է՝ «սովք անբաւք եւ հիւանդութիւնք եւ մահք բազմօրինակք»[1]:

Պատմահոր հեղինակած «Ողբ»-ը արժանացել է տարբեր գնահատականների[2], քննարկումները չեն շրջանցել հատկապես դրա երկրորդ հատվածը՝ իր իսկ ներկայացրած պատմության մեջ չարձանագրված բնական արհավիրքների նկարագրությունը, ինչը, կարծես, հակասում է Պատմահոր ժամանակի իրականությանն ու իրեն՝ իբրև հավանական ականատեսի[3]:

Ստորև, մենք փորձելու ենք ցույց տալ, որ նշված բնական արհավիրքները Արշակունյաց թագավորության անկման շրջանի ուղեկից երևույթներ էին, որոնք խտացված, բայց և միաժամանակ պարզ ու չափազանց ճշգրիտ ներկայացրել է Պատմահայրը՝ այն զետեղելով «Ողբ»-ի վերնագրից չենթադրվող, բայց Արշակունյաց թագավորության անկման և Լուսավորչի տոհմի ավարտի համատեքստին միանգամայն համահունչ հատվածում՝ որպես Աստծո կողմից լքվելու հետևանք:

*Մեծ Հայքի թագավորությունը IV դ. երկրորդ կես – V դ. սկզբներին. համառոտ ակնարկ*

Իր գոյության վերջին կես դարում Մեծ Հայքի քաղաքական կշիռն ու ռազմական ներուժն ակնհայտորեն նվազել էին: 370-ական թվականների վերջին և հաջորդ տասնամյակում իշխանության համար շարունակվող պայքարը սկզբում հանգեցրեց 387 թ. երկրի բաժանմանը Հռոմեական և Սասանյան կայսրությունների միջև՝ որպես երկու կախյալ թագավորության, ինչին որոշ ժամանակ անց հաջորդեց արքայական իշխանության վերացումը Հռոմի գերիշխանության տակ անցած հատվածում[4]: Խոսրով IV-ի (384/385 – 388/389 թթ.) գահակալության առաջին շրջանում արքայական բանակը, որը հիշատակվում է որպես «Խոսրովի գունդ», դեռևս բավարար ուժ ուներ, որպեսզի պարտության մատներ Հայաստանի արևմտյան (հռոմեական) հատվածում իշխող Արշակ III-ի (378–388/389

[1] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 365–366:

[2] S t e p a n y a n. 2021.

[3] Ս ա ր գ ս յ ա ն. 1997, 120:

[4] Ե ր ե մ յ ա ն. 1984, 111–115, B l o c k l e y. 1992, 42–45; G a r s o ï a n. 1997, 91–92; G r e a t r e x. 2000, 41–48; Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2018գ, 144–166:

թթ.) զորքերին և ճնշեր Վանանդացիների տան ապստամբությունը, ովքեր սպառնում էին հայկական երկու թագավորություններին և ապակայունացնում երկիրը[5]: Այդուհանդերձ, 388/389 թ. Խոսրով IV-ի գահընկեցությունն ու բանտարկությունը Իրանում, փաստորեն, պարսից արքունիքն իրականացրեց հայոց կողմից առանց ռազմական լուրջ դիմադրության հանդիպելու, և միայն մի քանի հայ նախարարներ՝ փոքրաթիվ ուժերով, փորձեցին ազատել իրենց արքային գերությունից, սակայն հաջողության չհասան[6]:

Խոսրովի եղբայր և հաջորդ Վռամշապուհի (388/389 – 414/415 թթ.) թագավորության ժամանակ հայոց բանակի մասին շատ տեղեկություններ չկան: Հայտնի է միայն Համազասպի անունը Մամիկոնյան տնից՝ որպես սպարապետի[7]: Ըստ Մովսես Խորենացու՝ Համազասպի մահից հետո «… ոչ ոք ի միաբանութիւն հաւաքեաց զգունդս Հայոց»[8]:

Հաջորդ տասնամյակում՝ Խոսրով IV-ի (երկրորդ շրջան, մոտ 415/416 թ.), Իրանի և ոչ-Իրանի արքայից արքա Հազկերտ I-ի (399–420 թթ.) որդի, հայոց մեծ արքա կարգված Շապուհի (415/416–419/420 թթ.) կարճատև գահակալության ընթացքում, ապա և հաջորդող միջթագավորության ժամանակ (419/420–422/423 թթ.) և հարստության վերջին արքա Արտաշիր (Արտաշես) III-ի (422/423–428 թթ.) գահակալության շրջանում որևէ հիշատակություն չի պահպանվել ո՛չ արքունի բանակի և ո՛չ էլ հայոց սպարապետի մասին, թեև սպարապետությունը, անկասկած, շարունակում էր գոյություն ունենալ[9]: Ամենայն հավանականությամբ, սպարապետի պաշտոնը Արշակունյաց հարստության վերջին արքաների օրոք թափուր էր[10]:

Նախորդ ժամանակաշրջանին հակառակ՝ աղբյուրները Արշակունյաց հարստության վերջին արքաներից և ոչ մեկին չեն հիշատակում նաև մարտադաշտում բանակն առաջնորդելիս: Մինչդեռ այլ էր պատկերը Հայաստանում մինչև 370-ական թվականները: IV դ. հայոց գահակալներ Տրդատ III Մեծը (287/298–330 թթ.), նրա որդի Խոսրով III Կոտակը (330–338/339 թթ.), նրան հաջորդած Տիրան (338/339–350 թթ.) և Արշակ II (350–367/368 թթ.) արքաները հաջողությամբ պաշտպանում էին երկիրը թե՛ սասանյան բանակներից[11], թե՛ այլ թշնամիներից,

---

[5] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 313–316:

[6] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 320–321:

[7] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 322–324:

[8] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 330:

[9] Մովսես Խորենացին հիշատակում է ոմն Ներսէս Ճիճրակացու որպես «զորագլուխ»: Պատմության մեկ այլ հատվածում նա հիշատակում է Վարդան Մամիկոնյանին որպես «ստրատելատ» (հմմ՝ գլխավոր զորավար), բայց, այդուհանդերձ, նրան չի անվանում «սպարապետ» (տե՛ս Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 332–333, 337–338):

[10] Վ ա ր դ ա ն յ ա ն. 2023, 75–79:

[11] Տե՛ս Բ ո ւ զ ա ն դ. 1987, 32–37, 44–45, P r o c o p i u s. 2022, 32. Տե՛ս նաև G r e a t r e x. 2022, 82–83.

հիմնականում՝ լեռնային Կովկասի և Կովկասից այն կողմ ապրող ժողովուրդներից[12]՝ չխուսափելով պատերազմել անգամ հռոմեացիների դեմ[13]: Հայկական զորքերը մասնակցել են նաև հռոմեա-պարսկական պատերազմներին, օրինակ, 363 թ. հռոմեական կայսր Հուլիանոս II-ի (361–363 թթ.) ձեռնարկած պարսկական արշավանքին[14]:

Վաղ հայկական աղբյուրները արքունի բանակի և ընդհանրապես հայոց զորքերի համար նշում են թվական տարբեր տվյալներ՝ շատ անգամ նշելով 10 հազար թիվը[15]: Այլ դեպքերում մարտադաշտ դուրս բերված հայոց զորքերի թվաքանակը տատանվում էր 20 հազարից 120 հազարի[16] սահմաններում[17]: Այս թվերը համապատասխանում են III–IV դդ. վերագրվող «Զորանամակի» տվյալներին, որը հայոց բանակի ընդհանուր թվաքանակը հասցնում է 120 հազարի՝ ներառյալ արքունի բանակի 36 հազար ռազմիկները[18]: Վերջինս աղբյուրներում հիշատակվում է «զօրս արքունի», «զօրքն արքունի», «գունդն արքունական» և այլ անվանումներով[19]: Աղբյուրներն արքունի բանակն անվանում են նաև «Այրարատյան գունդ»՝ Այրարատ նահանգի՝ արքունի ոստանի անունով. «... հանդերձ ամենայն պատերազմող զօրօքն այրարատեան գնդաւն»[20]: Այդ պատճառով արքայական զորքերը հիշատակվում են նաև «ոստանիկ» կամ «ոստանիկ մարդիկ» անունով[21], ինչպես նաև «այրուձի ... յարքունի տանէ», «զօրս յարքունի տանէն» անվանումներով և այլն[22]:

Ռազմական ավանների հետ մեկտեղ, որոնք հիշատակվում են «կայանք զօրաց» անունով[23] աղբյուրները նշում են նաև արքունապատկան այլ տիրույթներ՝

---

[12] Տե՛ս Բ ո ւ զ ա ն դ. 1987, 28–31, Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 230–231, 259–260, 266–267, P r o c o p i u s. 2022, 32.

[13] Խոսքը 312–313 թթ. Հայաստանի դեմ հռոմեական կայսր Մաքսիմինուս Դայայի (310–313 թթ.) մղած անհաջող պատերազմի մասին է (տե՛ս E u s e b i u s. 1932, 350–353). Տե՛ս նաև Մ ա ն ա ս ե ր յ ա ն. 1997, 189–195, G r e a t r e x. 2022, 83. Համտ. նաև Բ ո ւ զ ա ն դ. 1987, 164–167, 202–207:

[14] A m m i a n u s. 1984, 315–316, 321–322; Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 273–274: Տե՛ս նաև H a r r e l. 2016, 171–172, 194–195, 218.

[15] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 218–219, 228–229, 234–235, 244–245, 262–263, 286–287, 378–379:

[16] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 32–35, 222–223, 228–233, 290–291, 294–295, 306–307, 378–379:

[17] Միայն երկու դեպքում է պատմիչի նշած թվական տվյալը գերազանցում 120 հազարը, ինչը ակնհայտորեն չափազանցություն է (տե՛ս Բ ո ւ զ ա ն դ. 1987, 166–167, 204–205):

[18] Այս աղբյուրի մանրամասն քննության համար տե՛ս Ա դ ո ն ց. 1987, 267–330, Յ ա կ ե ր ե ա ն. 2011, 485–550:

[19] Տե՛ս, համապատասխանաբար, Բ ո ւ զ ա ն դ. 1987, 34–35, 82–83, 368–369:

[20] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 206–207:

[21] Տե՛ս Ե ղ ի շ է. 1957, 10, 92, Փ ա ր պ ե ց ի. 1904, 67, 73: Տե՛ս Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 95–101, П е р и х а н я н. 1956, 44–58; Ա դ ո ն ց. 1987, 531–533:

[22] Ե ղ ի շ է. 1957, 74:

[23] Ե ղ ի շ է. 1957, 78–79: Տե՛ս նաև A r e s h i a n. 2013, 155.

կալվածքներ, դաստակերտներ և ագարակներ[24], որոնք շնորհվում էին հայ ազնվականության ամենաբազմամարդ շերտի՝ ազատանու անդամներին ռազմական ծառայության դիմաց[25]: Այդ պատճառով ազատներից կազմված թագավորական զորքերը երբեմն կոչվում էին «ազատագունդ» կամ «ազատագունդ բանակն արքունի» անունով[26]:

Չնայած հայոց աշխարհի այլ հատվածներ ևս պատկանում էին գահին, այդ թվում Անգեղտունը և որոշ ամրոցներ Ծոփքում[27], կալվածքներ Տարոնում[28], ինչպես նաև Ատրպատականին և Աղվանքին հարող գոտիներում՝ ներառյալ Խաղխաղ քաղաքը Ուտիքում՝ հայոց արքաների ձմեռային նստավայրը[29]՝ բայց, անկասկած, Այրարատն էր, որ հանդիսացել է գահի գլխավոր տնտեսական հենարանը և արքունի բանակի համար ծառայել որպես մարդկային ուժի հիմնական աղբյուր:

*Քաղաքաշինությունը Մեծ Հայքում IV դ.*

Այրարատում արքունի հողերի զգալի մասը կենտրոնացած էր Արարատյան դաշտավայրում և հարակից գավառներում՝ ձգվելով Արաքսի վերին ու միջին հոսանքների երկայնքով: Այստեղ էին գտնվում արքայական քաղաքներից չորսը՝ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը և Վաղարշապատը, իսկ IV դ. հիմնվեցին երկու նոր քաղաքներ՝ Արշակավանը և Դվինը, որից վերջինը՝ դարձյալ Արարատյան դաշտավայրում:

Այս լայնատարած և բերքատու տարածքը՝ տասնյակ հազարավոր հեկտար մշակովի հողերով, որոնք ոռոգվում էին Արաքսից բերված ջրանցքների ջրերով, թագավորության գլխավոր տնտեսական կենտրոնն էր՝ «գլուխ աշխարհիս Հայոց»[30], և ապահովում էր խիտ բնակեցված արքայական քաղաքների, ինչպես նաև շրջակա ավանների ու գյուղական բնակավայրերի գոյությունը:

Քաղաքի կյանքը մեծապես կախված էր իր մերձակա, քաղաքի վարչական ենթակայության տակ գտնվող գյուղատնտեսական տարածքից, որը հունարեն կոչվում էր «խորա»[31]: Օրինակ՝ Արտաշատի «խորան» հայկական աղբյուրներում կոչվում էր «Ոստան Հայոց», իսկ հետագայում ստացավ «Ոստան Դընոյ» անվանումը՝ Դվինի վերելքով պայմանավորված[32]: Այն ներառում էր բազմաթիվ գյուղատիպ բնակավայրեր, որոնք պատկանում էին մայրաքաղաք Արտաշատին.

---

[24] S a r g s y a n. 1968, 43–50.

[25] Մ ա ն ա ն դ յ ա ն. 1957, 335–340, П е р и х а н я н. 1956, 57–58; G a r s o ï a n. 1997, 77.

[26] Տե՛ս Բ ո ւ զ ա ն դ. 1987, 192–193, 262–263, 284–285, 334–335, Փ ա ր պ ե ց ի. 1904, 20:

[27] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 218–219, 314–317:

[28] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 202–203, 292–293:

[29] Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 1983, 30–31:

[30] Փ ա ր պ ե ց ի. 1904, 11:

[31] Ք ո չ ա ր յ ա ն. 2025, 86–88:

[32] Ե ր ե մ յ ա ն. 1963, 49, 74:

«… և զԱրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեւղս և զաւանս, որ շուրջ զնովաւ էին»[33]:

Ի տարբերություն Արշակունյաց հարստության կառավարման վաղ շրջանում հիմնադրված քաղաքային կենտրոնների՝ ինչպիսին էր Վաղարշ I-ի (117–140 թթ.) կողմից կառուցված Վաղարշապատը (Կայնեպոլիս)[34], Դվինի և Արշակավանի հիմնադրման պատճառներն էապես տարբերվում էին: Մովսես Խորենացին հայտնում է Դվինի հիմնադրման հարցում բնական միջավայրի փոփոխման ունեցած դերակատարության մասին՝ պայմանավորված Արտաշատի շրջակայքի անառողջ օդով. «… և օդք ջերմայինք պղտորեալք ժանդահոտութեամբ փչէին», ինչը վկայում է ճահճացման մասին, ըստ երևույթին՝ Արաքս կամ Մեծամոր գետերի հունի փոփոխման հետևանքով[35]: Դա ստիպեց Խոսրով III-ին իր նոր նստավայրի համար ընտրել ավելի հարմար վայր: Արտաշատից ոչ հեռու գտնվող Դվին կոչվող բլրի գագաթին նա կառուցեց արքայական ապարանք՝ այնտեղ «կամավոր» վերաբնակեցնելով մայրաքաղաքի բնակչության մի մասին[36]: Սա երկրորդ դեպքն է, երբ Հայաստանի մայրաքաղաքի տեղափոխությունը պայմանավորված էր միջավայրային փոփոխություններով, իսկ առաջին վկայությունը վերաբերում է Երվանդ IV-ի (Ք. ա. մոտ 220–200 թթ.) կողմից արքունի նստավայրը Արմավիրից Երվանդաշատ տեղափոխելուն՝ Արաքս գետի հունի փոփոխությամբ պայմանավորված[37]:

Հնագիտական առումով արքայական նոր քաղաքը խիստ համեստ է թվում: Դվինում IV դ. մշակութային շերտերը շատ թույլ են արտահայտված, միակ՝ շատ թե քիչ նկատելի շինությունը համեմատաբար սահմանափակ չափերով բազիլիկ տիպի սյունազարդ եռանավ կառույցն էր՝ «գահանիստ դահլիճ» կամ, ավելի շուտ, եկեղեցի[38]: Սա վկայում է, որ արքայական այս ձեռնարկում, առնվազն քաղաքի կառուցման սկզբնական փուլում, ներդրվել են նյութական և մարդկային խիստ սահմանափակ միջոցներ[39]: Փավստոս Բուզանդը հայտնում է Գառնի ամրոցից Դվին կոչվող բլուրը ձգվող նորատունկ անտառում արքայական ապարանքներ կառուցելու մասին («զապարանսն արքունականս»), բայց չի նշում բուն քաղաքի կառուցման մասին[40]: Հետաքրքիր է, որ ո՛չ Փավստոս Բուզանդը, ո՛չ էլ Մովսես Խորենացին Դվինը չեն հիշատակում Մեծ Հայքի քաղաքների շարքում, որոնք բոլորն էլ ավերվել են սասանյան բանակների կողմից 367–368 թ.[41]: Ըստ երևույթին, IV դ. Դվինը որևէ նշանակալի դեր չի կատարել Հայաստանի քաղաքային կենտրոնների շարքում:

---

33 Եղիշէ. 1957, 67–69, 78–79:

34 Gnuni, Mkrtchyan, Tadevosyan. 2024, 236–241.

35 Zardaryan. 2024, 55–56.

36 Խորենացի. 1913, 265:

37 Խորենացի. 1913, 165:

38 Քալանթարյան, Ղաֆադարյան. 1990, 143–146: Հմմտ. Քոչարյան. 2025, 11, ծնթ. 19, 80–81:

39 Areshian. 2013, 154; Garsoïan. 1984–1985, 70.

40 Բուզանդ.1987, 32–33:

41 Բուզանդ. 1987, 264–267, Խորենացի. 1913, 300: Տե՛ս նաև Թովմա Արծրունի. 1985, 102–105:

Ինչ վերաբերում է Արշակավանին, այն հիմնադրել է Արշակ II-ը Այրարատ նահանգի հարավային գավառներից Կոգովիտում: Այստեղ արքան կառուցել է արքայական ապարանք՝ դաստակերտը վերածելով ավանի, ապա և՝ պարսպապատ քաղաքի, ուր հավաքվել է մեծաթիվ բնակչություն. «Եւ նոյն ժամայն ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն»[42]:

Այս նախագծի իրականացումը նույնպես կարող էր ունենալ էկոլոգիական պատճառներ: Կոգովիտի ընտրությունը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր նրա բավարար ջրային պաշարներով (Գայլատու լիճը, այժմ՝ Բալըք Գեոլյու) և լճից սկիզբ առնող, դեռևս ուրարտական շրջանում կառուցված ոռոգման ընդարձակ ենթակառուցվածքների գոյությամբ[43]: Արքունի նոր քաղաքը, սակայն, ողբերգական ավարտ ունեցավ՝ կործանվելով մի քանի հայ նախարարների կողմից, ովքեր ընդդիմանում էին արքայի ներքին քաղաքականությանը[44]: Միևնույն ժամանակ, ըստ Փավստոս Բուզանդի, ժանտախտն էր, որ ոչնչացրեց քաղաքի բնակչությանը:

IV դ. արքայական նստավայրերի՝ ըստ էության հարկադիր տեղափոխությունները կարող են վկայել շատ ավելի խորքային երևույթի մասին: Այդ ձեռնարկումներում ներդրված միջոցները, հատկապես Արշակավան քաղաքի դեպքում՝ իր արքայական ապարանքով, կենտրոնական եկեղեցիով և պարսպապատերով, որը գտնվում էր Արարատյան դաշտի երկրագործական հողերից բավական հեռու, կարող են մատնանշել արքունի ոստանում ի հայտ եկած տնտեսական դժվարությունները, ինչով էլ, ըստ երևույթին, պայմանավորված էր նստավայրի տեղափոխության անհրաժեշտությունը: Արշակ II-ի թագավորության տարիներին ժանտախտի բռնկումները կարող էին սովի հետևանք լինել, նույնիսկ եթե աղբյուրներում այդ մասին ուղղակի տվյալներ չկան: Արքայի վարած ներքին քաղաքականությունը, տնտեսական դժվարությունները, Հռոմեական ու Սասանյան կայսրությունների հետ Հայաստանի հարաբերություններում առաջացած խնդիրները հանգեցրին հակամարտության արքայական իշխանության և մի շարք նախարարների ու եկեղեցու միջև: Ներսես Ա Մեծ կաթողիկոսի (353–373 թթ.) կամքով արքունիքի գլխավոր ներքինու՝ հայր մարդպետի սպանությունից հետո[45], ով արքայական ուժեղ իշխանության կողմնակից էր[46], Արշակ II-ը ոչնչացրեց մի քանի իշխանական տների անդամների, որոնք պատասխանատու էին Արշակավանի ավերման համար[47]: 364–368 թթ. հայ-պարսկական պատերազմ-

[42] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 288: Տե՛ս նաև Բ ու զ ա ն դ. 1987, 168–171:

[43] K u ş l u, Ş a h i n. 2009, 2110. Այդ ջրանցքները VII դարում դեռևս գործում էին (տե՛ս P r e i s e r - K a p e l l e r. 2024, 330):

[44] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 288–289:

[45] Բ ու զ ա ն դ. 1987, 180–183, Թ ո վ մ ա  Ա ր ծ ր ու ն ի. 1985, 98–101: Մարդպետության գործակալության մասին տե՛ս Գ և ո ր գ յ ա ն, Խ ա չ ա տ ր յ ա ն. 2023, 129–157:

[46] Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. 2018ա, 90–92:

[47] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 294–295:

ների ժամանակ սասանյան բանակների ավերիչ արշավանքներից հետո իրավիճակն էլ ավելի վատթարացավ՝ հանգեցնելով բոլոր խոշոր քաղաքային կենտրոնների լայնածավալ ավերումների և Հայաստանից մեծաթիվ բնակչության տեղահանության:

*Հայաստանը ճգնաժամի մեջ. Պապ արքայի ձեռնարկումները*

Արշակ II-ի և Փառանձեմ թագուհու որդուն՝ Պապին, վաղ հայկական պատմագրությունը ներկայացնում է որպես բացառապես բացասական կերպարի: Իբրև թե մանկուց «ընծայված» լինելով դևերին՝ հայ պատմիչները արքային մեղադրում էին բարոյականության դեմ մեղքեր գործելու մեջ[48]: Պապին ուղղված մեղադրանքներից էր նաև Ներսես Ա կաթողիկոսի սպանությունը թունավորելու միջոցով[49], մի արարք, որը նա, հնարավոր է, երբեք էլ չէր գործել[50]: Պատանի արքայի նկատմամբ նման վերաբերմունքի պատճառը կարող էր լինել նրա ներքին քաղաքականությունը՝ թագավորությունը վերակազմակերպելու և արքայական իշխանությունը ամրապնդելու համար, իսկ այդ քայլերի առաջին հասցեատերը եկեղեցին էր:

Հայտնի է, որ արքայական իշխանության տնտեսական հիմքը վերականգնելու համար Պապը հրամայել էր հարքունիս բռնագրավել եկեղեցական հողատարածքների հինգ-յոթերորդ մասը, որոնք նրան շնորհվել էին Տրդատ III Մեծի կողմից IV դ. սկզբներին: Այդ ժամանակ հայոց եկեղեցու տնօրինության տակ էր գտնվում տասնհինգ գավառ երկրի տարբեր նահանգներում[51], որոնք զբաղեցնում էին մոտ 20–30 հազ. քառ. կմ ընդգրկող հսկայական տարածք: Եկեղեցու տիրույթներն իր հողային և մարդկային ռեսուրսներով միանգամայն համադրելի էին Այրարատի արքունի ոստանի տարածքների և ռեսուրսների հետ[52]: Պապը նաև վերացրեց եկեղեցու օգտին գանձվող հարկերն ու տուրքերը՝ «պտուղը» և «տասանորդը», հրամայեց փակել բոլոր կուսանոցները և ոչնչացնել աղքատանոցները, որոնք դեռևս պահվում էին արքայական կամ եկեղեցական հողերի հաշվին:

Մարդկային ռեսուրսների պակասը լրացնելու համար արքան հրամայեց բանակ զորակոչել հոգևորականության՝ զենք կրելու ունակ ազգականներին, որոնք նախկինում ազատված էին զինվորական ծառայությունից[53]: Այստեղ կարելի է հիշել Պապի ժամանակակցի՝ Վաղես կայսեր նմանատիպ գործողությունը, ով բանակի թվակազմի մշտական պակասի պատճառով մահվան սպառնալիքով հրամայել էր հոգևորականներին անցնել զինվորական ծառայության[54]:

---

[48] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 240–243, 328–329, Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 306:

[49] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 330–335, Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 305–306, Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի. 1985, 108–109:

[50] Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2018բ, 132–133:

[51] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 178–181:

[52] Տե՛ս H e w s e n. 1997, 133–137.

[53] Բ ո ւ զ ա ն դ. 1987, 348–353:

[54] L e n s k i. 2004, 95–103.

Պապի ձեռնարկումները վատթարացրին արքայական իշխանության և եկեղեցու միջև արդեն իսկ լարված հարաբերությունները, և չնայած որոշ հայ պատմիչներ Պապի գործունեությունը թվագրում են Ներսեսի մահից հետո՝ 373 թ.՝ իրականում դրանք իրականացվել են նրա կենդանության օրոք: Ամեն դեպքում հայտնի է, որ Ներսեսն արգելել էր արքային մուտք գործել եկեղեցի[55]: Պապն ինքը, հնարավոր է, արիոսականության հետևորդ էր[56]. միգուցե, այդ ուսմունքին ծանոթացել էր Փոքր Ասիայի հյուսիսում ընկած Նեոկեսարիա քաղաքում (հռոմեական Պոնտոս Պոլեմոնիակուս նահանգ) գտնվելու և ուսումնառության ընթացքում[57]: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ նա հեթանոսական կրոնի հետևորդ էր[58], մասնավորապես, Դիոնիսոսի պաշտամունքի հետևորդ, ինչպես իր մայրը՝ թագուհի Փառանձեմը[59]: Ամեն դեպքում, աղբյուրները մեղադրում են Պապին հին հայոց աստվածների պաշտամունքը խրախուսելու մեջ[60]: Մինչդեռ ժողովրդի լայն շերտերի կողմից հին հավատալիքներին վերադարձը կարող էր պայմանավորված լինել տևական տնտեսական դժվարություններով, ինչպես նաև քրիստոնեական կրոնից՝ ի դեմս Հայոց եկեղեցու, բնակչության հիասթափությամբ, որն անկարող էր գտնվել կանխելու ժողովրդին սպառնացող աղետները:

Հռոմեական զենքի օգնությամբ գահ բարձրացած Պապը փորձեց հավասարակշռել նաև արտաքին քաղաքականությունը և բանակցություններ սկսեց Սասանյան արքայից արքայի հետ: Կարճ ժամանակ անց պատանի արքան իրեն բավական զորեղ էր զգում՝ որպեսզի հռոմեացիներից պահանջեր տասներկու քաղաք, այդ թվում՝ Կեսարիան ու Եդեսիան և, եթե հավատանք աղբյուրներին, կայսերը սպառնար նույնիսկ պատերազմով[61]:

Կարճ ժամանակ անց, Վաղեսի հրամանով, Պապը սպանվեց հռոմեացի զորավար Տրայանոսի կողմից կազմակերպված խնջույքի ժամանակ: Վերջինս ջերմեռանդ քրիստոնյա էր[62] և, ըստ երևույթին, գործել է որոշ հայերի, հավանաբար՝ հոգևորականների օգնությամբ, ինչպես ակնարկում է հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսը[63]:

Պապի կողմից գահի տնտեսական հիմքը ամրապնդելու և աշխատուժի ու ռազմուժի պակասը լրացնելու միջոցառումները կարճաժամկետ արդյունք տվեցին: Արքայի սպանությունից մի քանի տարի անց սպարապետ Մանուել Մամիկոնյանը՝ Պապի որդիների խնամակալն ու Հայաստանի ժամանակավոր կառավարիչը, հազիվ կարողացավ հավաքել 20 հազար մարդ. «... զօրավարն Հայոց Մանուել, և գումարէր զզօրսն իւր ըստ բռնշոյ ժամանակին որչափ և եկն ի ձեռն իւր ...»[64]:

[55] Բուզանդ. 1987, 328–329:
[56] Խորենացի. 1913, 294: Տե՛ս Garsoïan. 1997, 89–91.
[57] Ammianus. 1939, 81–82.
[58] Lenski. 2002, 180; Drijvers. 2016, 585.
[59] Manasseryan. 2009, 95.
[60] Բուզանդ. 1987, 350–353:
[61] Բուզանդ. 1987, 352–353: Տե՛ս նաև Lenski. 2002, 178, n. 143.
[62] Lenski. 2002, 178.
[63] Ammianus. 1939, 295.
[64] Բուզանդ. 1987, 378–379:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

Ուշ Արշակունյաց շրջանում արքունի քաղաքների մի մասը էական անկում էր ապրել և վերածվել փոքր ավանների ու գյուղերի, օրինակ՝ Արտաշատը, իսկ մյուսներն ընդհանրապես դադարել էին գոյություն ունենալուց, այդ թվում՝ Երվանդաշատը և Զարիշատը, մինչդեռ մեկ այլ քաղաք՝ Զարեհավանը, երկար ժամանակ լքված էր[65]: Հատկանշական է, որ արքայական քաղաքներից Արմավիրը կորցրել էր իր նշանակությունը որպես արքունի նստավայր՝ դեռևս Արշակ II-ի գահակալության ժամանակ՝ հայ-պարսկական պատերազմներից առաջ[66]: Հետևաբար քաղաքային կյանքի անկումը և վերածննդի բացակայությունը չի կարող կապվել միմիայն պարսկական բանակների գործած ավերածությունների հետ[67]: Այդպիսի ավերածությունների Հայաստանն ականատես է եղել նախկինում ևս[68]: Արշակունյաց Հայաստանի քաղաքները չէին և չեն կարող դիտվել որպես «օտարածին տարրեր» (ըստ Նինա Գարսոյանի տերմինաբանության)[69], իսկ քաղաքային վերածննդի բացակայությունը կարող էր ունենալ բոլորովին այլ պատճառներ:

Հայաստանում քաղաքային կյանքի անկումը կարող էր պայմանավորված լինել քաղաքների գյուղատնտեսական գոտիների՝ բնակչությանը պարենով ապահովելու անկարողությամբ, ինչը հանգեցնելու էր բնակավայրերի տարածքի նվազմանն ու բնակչության թվի էական անկմանը: Դա կարող է նաև վկայել արքայական ու քաղաքային հաստատությունների անկարողության մասին՝ ոռոգման ենթակառուցվածքները գործունակ պահելու հարցում: Արաքս գետի հունի փոփոխությունը, մթնոլորտային տեղումների կտրուկ նվազումն ու ջրի անբավարարությունը, երկարատև երաշտները կարող էին խոչընդոտել ուշ Արշակունյաց Հայաստանի քաղաքների վերածնունդը:

Ինչպես երևում է, տնտեսական դժվարությունները հանգեցրել են պարենի պակասի և սովի, ինչպես քաղաքային, այնպես էլ երկրագործ բնակչության զանգվածային փախուստի և աշխատուժի պակասի, ռազմական ուժի անկման ու դրան հետևած քաղաքական ճգնաժամերի՝ խաթարելով իշխող արքայատան տնտեսական, ռազմական և գաղափարախոսական հիմքերը: Ահա թե ինչպես է Խորենացին նկարագրում Հայաստանում տիրող անիշխանությունը. «Ուստի աղմկավ և բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամայանայր. վասն որոյ պակասեալ լինէին հարկք արքունի,

---

[65] Саркисян. 1955, 61–62; Garsoïan. 1984–1985, 73–75.

[66] Խորենացի. 1913, 294–295:

[67] Այստեղ Դվինի դերը, որը վերելք էր ապրում հատկապես V դ. հետո, իր հասարակական կառույցներով, տաճարներով և ամուր ու ընդարձակ պարիսպներով, բացառություն է և պայմանավորված էր սասանյան կայսերական ազդակներով, այն է՝ քաղաքի կարգավիճակի փոփոխությամբ՝ որպես մարզպանական Հայաստանում հաստատված սասանյան վարչակազմի կենտրոնի և մարզպանի նստավայրի: Այս շրջանակում է տեղավորվում և հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Դվին 484 թ.: Այս մասին տե՛ս Саркисян. 1955, 62; Garsoïan. 1984–1985, 73–74.

[68] Զորօրինակ՝ Արտաշատի ավերումները հռոմեական բանակների կողմից 59 և 163 թթ., ինչի մասին ամփոփ տե՛ս Hewsen. 1986, 654.

[69] Տե՛ս Garsoïan. 1984–1985, 82.

և հատեալ ճանապարհք ռամկաց, և ամենայն բարեկարգութիւն վրդովեալ ապականէր»[70]:

Եռամյա «բարեկարգության» բացակայությունը Հայաստանում վերաբերում է միջթագավորության շրջանին, բայց կասկած չկա, որ սա շատ ավելի մեծ ժամանակահատվածի՝ արքայատան անկման եզրափակիչ փուլի խտացված նկարագրություն է:

*Երաշտի, սովի և համաճարակների վկայությունները հունա-հռոմեական և հայկական աղբյուրներում (IV դ. երկրորդ կես – V դ. սկիզբ)*

IV դ. երկրորդ կեսն աչքի է ընկնում Հռոմեական կայսրության արևելյան նահանգներում երկարատև երաշտի, սովի և համաճարակների մասին վկայություններով: Մասնավորապես, հայտնի է, որ 368–370 թթ. հռոմեական Փռյուգիա և Կապադովկիա նահանգները՝ ընդհուպ մինչև Սիրիա, խիստ տուժել են սննդի պակասից՝ չորային ձմռան և գարնան պատճառով, որոնք այդ նահանգները թողեցին առանց բերքի[71]: Նույնը տեղի է ունեցել 372–373 թթ., ապա կրկնվել 384-385 թթ. Սիրիայում[72]: Անտիկ աղբյուրները վկայում են IV դ. վերջերին հյուսիսային Միջագետքում, V դ. սկզբներին կենտրոնական ու արևելյան Փոքր Ասիայում, ապա՝ 421–422 թթ. կրկին թերակղզու հյուսիսային շրջաններում (Պոնտոս և Պափլագոնիա) տիրող սովի մասին[73]: Ընդհանրապես IV դ. հարավսևծովյան հռոմեական նահանգներում սուր տնտեսական ճգնաժամ էր տիրում[74]: Արևելամիջերկրածովյան ավազանի երկրներում սննդի պակասի ու երաշտի բազմաթիվ վկայություններ նույնպես վերաբերում են 360–380-ական թվականներին[75]:

Միաժամանակ, աղբյուրները հաղորդում են Կապադովկիայում 373 թ. տեղ գտած մարդկանց և կենդանիների համաճարակի ու երաշտի մասին[76]: Համաճարակներ են վկայված Սիրիայում 384–385 թթ. և կրկին Կապադովկիայում՝ 405–407 թթ. սահմաններում[77]: Կիպրոսը ողջ IV դ. տառապել է տասնամյակներ տևող երաշտից և սովից[78]: Նույն դարում գրանցված սովի ու սննդի պակասի դեպքերի մեկ երրորդից ավելին, ինչպես նաև գրանցված համաճարակների կեսից ավելին, բաժին են ընկնում Հայաստանին հարակից շրջաններին՝ Փոքր Ասիային և Սիրիա-Միջագետքին[79]:

---

[70] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 332:

[71] L e n s k i. 2002, 253, 280, 388–389; H a r p e r. 2017, 170. Տե՛ս նաև X o p l a k i, L u t e r b a c h e r, L u t h e r et al. 2021, 551–555.

[72] L e n s k i. 2002, 280, n. 103, 390; H a r p e r. 2017, 183.

[73] S t a t h a k o p o u l o s. 2004, 215, 219–221, 227–228.

[74] K o c h. 2025.

[75] S t a t h a k o p o u l o s. 2004, 198–210.

[76] L e n s k i. 2002, 389–390.

[77] S t a t h a k o p o u l o s. 2004, 209–210, 221.

[78] H a l d o n, R o b e r t s, I z d e b s k i et al. 2014, 154 (Appendix I).

[79] S t a t h a k o p o u l o s. 2004, 32–34, Tables 2.4–2.5. Տե՛ս նաև H a l d o n, R o b e r t s, I z d e b s k i et al. 2014, 154–155 (Appendix I); M c C o r m i c k, B ü n t g e n, C a n e et al. 2012, 182, Figure 6; I z d e b s k i, P i c k e t t, R o b e r t s et al. 2016, 198–199, Figure 6, 201, Figure 8, 204.

350–420-ական թվականներին սով է վկայված Հռոմեական կայսրության այլ գոտիներում ևս[80]: Հատկապես Հռոմը IV դ. երկրորդ կեսին պարբերաբար տառապել է պարենի պակասից և սովից[81]: Հացահատիկի համար առավել բարձր գները Հռոմում վկայված են հենց 350–370-ական թվականների համար[82]: Հատկանշական է, որ Հռոմում մահացության կտրուկ աճ է գրանցվել 350–400 թթ. ընթացքում[83]: Վկայությունների մեծ մասը վերաբերում է երաշտի հետևանքով առաջացած սովին և պարենային ճգնաժամերին[84]:

Ինչ վերաբերում է հայ պատմագրությանը, ապա հայկական աղբյուրները IV դ., մասնավորապես, 360-ական թվականներին վերաբերող համաճարակի երկու դրվագ են պահպանել: Առաջին հիշատակությունն առնչվում է պաշարված Արտագերսին, որի պաշտպանները, ինչպես նաև այնտեղ ապաստանած բնակչությունը, ըստ Փավստոս Բուզանդի, զոհ են գնացել ամրոցում բռնկված համաճարակին[85]: Համաճարակի երկրորդ բռնկումը, որը հարվածել է թե՛ մարդկանց և թե՛ կենդանիներին, վերաբերում է Արշակավանին, որը ոչնչացրել է քաղաքի ողջ բնակչությանը: Փավստոս Բուզանդի վկայած ախտանշանները կարող են վերաբերել թե՛ ջրծաղիկին և թե՛ բուբոնային ժանտախտին. «Եւ յետ երից աւուրց անցանելոյ բանիցն ասացելոց ՚ի վերայ, որ խօսեցեալ եղեն ՚ի բերանոյն երանելոյն Ներսէսի, մատնեաց տէր զգեւղաքաղաքն զԱրշակաւանն ՚ի ձեռս հարուածոցն: Եւ սկսաւ հատանել զոր չարակեղն իմն կոչեն, իսկ կէսքն ժանդ անուանեն. Ելանէր ՚ի վերայ մարդկանն և անասնոցն: Ոչ աւելի եղև հարուածոցն ՚ի վերայ նոցա քան զերիս աւուրս յերկարեցաւ, զի անմարդացաւ»[86]:

Արդյոք այս երկու բռնկումները տեղայի՞ն բնույթ ունեին, թե՞ փոխկապված էին՝ մնում է անհայտ: Համենայն դեպս, դրանք տեղի են ունեցել նույն ժամանակահատվածում՝ Արշակ II-ի թագավորության տարիներին: Բացի դրանից, աղբյուրներն անուղղակի վկայում են երկիրը համակած մեկ այլ համաճարակի մասին: Նկարագրելով Ներսես Ա Մեծի գործերը՝ աղբյուրը հայտնում է Արշակ II-ի թագավորության երրորդ տարում հայոց կաթողիկոսի ձեռնարկած քայլերի մասին՝ յուրաքանչյուր գավառում կառուցել աղքատանոցներ և բորոտանոցներ՝ բորոտների ու այլ հիվանդություններով տառապողների համար, որոնց սնունդն ապահովելու էին շրջակա ավանների ու ագարակների բնակիչները՝ առանց նրանց հետ անմիջական շփման մեջ մտնելու՝ կանխելու համար հիվանդության տարածումը[87]: Սա կարող է վկայել երկրում տիրող համաճարակների և եկեղեցական իշխանությունների ձեռնարկած քայլերի մասին՝ դրա հետագա տարածումը կանխելու նպատակով:

[80] Palanque. 1931, 355–356; Lenski. 2002, 278; Stathakopoulos. 2004, 187–228.

[81] Stathakopoulos. 2004, 28.

[82] Harper. 2017, 178, Figure 5.4.

[83] Harper. 2017, 172–173, Figure 5.3.

[84] Stathakopoulos. 2004, 37.

[85] Բուզանդ. 1987, 264–265:

[86] Բուզանդ. 1987, 176–177:

[87] Բուզանդ. 1987, 120–121, Խորենացի. 1913, 278–280:

Արդյո՞ք համաճարակների այս դրվագները երաշտի և սովի հետևանք էին: Զարմանալիորեն IV դ. հայկական աղբյուրներում սովի մասին վկայություններ չկան: Միևնույն ժամանակ, համաճարակից տուժածներին պետական կամ եկեղեցական հողերի միջոցներով անհրաժեշտ սնունդ տրամադրելու որոշումը հիշեցնում է հռոմեական կայսերական իշխանության քայլերը՝ եկեղեցական հաստատությունների միջոցով սատարել սննդի պակասից և հիվանդություններից տառապող բնակչությանը. այդպես էին վարվում, օրինակ, 333 թ.[88] հռոմեական արևելյան նահանգները՝ ներառյալ Կիլիկիան և Սիրիան ընդգրկած սովի ու համաճարակի ժամանակ: Հետաքրքիր է, որ, ինչպես նշում է Մովսես Խորենացին, Ներսես Մեծը վերոհիշյալ քայլերն իրականացրել է կայսրության օրինակով. «... քանզի զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին»[89]:

*Ժողովուրդների գաղթերը IV դ. երկրորդ կես – V դ. սկզբներին*

Այս ժամանակաշրջանը նշանավորվեց նաև տարբեր ժողովուրդների զանգվածային գաղթերով, որոնց պատճառը, ինչպես աղբյուրներն են նշում, սովն էր:

376 թ. զրկանքների մատնված տասնյակ հազարավոր գոթեր, հետապնդվելով հեռավոր Արևելքից եկած քոչվոր հոների կողմից, ստիպված էին ապաստան խնդրել և հատել Հռոմեական կայսրության սահմանները ստորին Դանուբի շրջանում: Գաղթյալ բնակչության մեջ տարածված սովը և նրանց գերշահագործումը հռոմեական նահանգային իշխանությունների կողմից, ինչպես նաև հարկադիր զինվորական հավաքագրումները հանգեցրին գոթական մեծ ապստամբությանը, որի գագաթնակետը 378 թ. Ադրիանուպոլիսի ճակատամարտն էր: Այստեղ հռոմեական բանակը ծանր պարտություն կրեց[90]: 400 թ. հետո սկսվեց գոթական ներխուժումների նոր ալիք՝ այս անգամ Ալպերից դեպի հյուսիս ընկած հռոմեական նահանգներ: V դ. առաջին տասնամյակների ընթացքում տարբեր գերմանական ժողովուրդներ, ինչպես նաև էթնիկ այլ խմբեր, այդ թվում՝ հոները և հալանները (ալաններ)[91], տարածվեցին Հռոմեական կայսրության արևմտյան տարածքներում՝ Բրիտանիայից մինչև Հյուսիսային Աֆրիկա[92]:

Մոտավորապես նույն ժամանակ Հայաստանը ևս բախվեց հոների ներխուժումներին, որոնք արևելքից սպառնում էին թե՛ Հռոմեական և թե՛ Սասանյան կայսրություններին[93]: 395 թ. Հռոմեական կայսրության արևելյան նահանգներ

[88] Stathakopoulos. 2004, 62, 182–183.

[89] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 278–280:

[90] Hughes. 2013, 147–158, 165–203; Meier. 2019, 171–183.

[91] Bachrach. 1973; Alemany. 2000.

[92] Տե՛ս Heather. 1998, 487–515; Heather. 2010, 151–206, 221–227, Maps. 7–9; Heather. 2015, 209–229; James. 2015, 50–63; Meier. 2019, 302–307.

[93] Հոների վաղ պատմության մասին տե՛ս de la Vaissière. 2015, 175–192. Հոների՝ IV–V դդ. Հռոմեական և Սասանյան կայսրությունների հետ ունեցած փոխհարաբերությունների մասին տե՛ս Heather. 1995, 4–41; Heather. 2010, 207–

ներխուժած հոներն անցել էին հենց Հայաստանի տարածքով: Այնուհետև, շարժվելով Եփրատ ու Տիգրիս գետերի երկայնքով, հոների մեկ այլ ալիք հասավ մինչև Սասանյան կայսրության մայրաքաղաք Տիզբոն[94]: Հոնական ներխուժումները կրկնվեցին 397 և 398 թթ.: Հայկական աղբյուրները, լռելով այս իրադարձությունների մասին, հաղորդում են Սասանյան կայսրության արևելյան նահանգների ուղղությամբ հոների ներխուժումների մասին՝ նրանց հիշատակելով «քուշաններ» անունով[95]:

IV դ. երկրորդ կեսը հռոմեացիների և արաբական տարբեր ցեղերի, մասնավորապես, կայսրության ֆեդերատի կարգավիճակ ունեցող սարակենների միջև աճող լարվածության ժամանակաշրջան էր, որը 370–380-ական թվականներին վերաճեց ռազմական հակամարտության[96]: Անվտանգ չէր անգամ Փոքր Ասիայի ներքին շրջաններում, որտեղ իսավրացիների՝ բազմիցս կրկնվող ապստամբությունները՝ 367–368, 375, ինչպես նաև 404–409 թթ., երկարաժամկետ խնդիր դարձան կայսերական իշխանության համար[97]: Սարակենների և իսավրացիների ապստամբությունները կարող էին պայմանավորված լինել նաև տնտեսական դժվարություններով[98], նույնիսկ եթե դրանք միշտ չէ, որ հիշատակվում են սկզբնաղբյուրներում[99]:

Վերը նշված զանգվածային գաղթերի և անկայունության պատճառը սովն էր: Գոթական ցեղերն արդեն իսկ զրկանքների մեջ էին նախքան Հռոմի սահմանները հատելը: Հոների տեղաշարժերը դեպի արևմուտք, որի հիմնական ալիքը թվագրվում է 350–370 թթ.[100], նույնպես սովի հետևանք էր[101]: IV դ. երկրորդ կես – V դ. սկզբներին վկայված երաշտի, սովի և համաճարակների դեպքերը համընկնում են կլիմայական փոփոխությունների մի շրջափուլի, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է «Ուշ հռոմեական գերերաշտ» անվանումը:

---

221; Maas. 2015, 3–25; Payne. 2015, 282–299; Meier. 2019, 156–170; Манасерян. 2019; Preiser-Kapeller. 2021, 299–320; Hakenbeck, Büntgen. 2022, 876–886.

[94] Greatrex, Greatrex. 1999, 65–68; Meier. 2019, 298–302; Манасерян. 2019, 9–15; Morley. 2025, 545. Սկզբնաղբյուրների մասին տե՛ս նաև Greatrex, Lieu. 2002, 17–19.

[95] Բուզանդ. 1987, 314–317, 364–365: Հռոմեական աղբյուրների մասին տե՛ս նաև Potts. 2018, 287–290.

[96] Parker. 1986, 145–146; Lenski. 2002, 204–210.

[97] Lenski. 2002, 196–200; Hughes. 2013, 138–140.

[98] Ammianus. 1939, 81–82.

[99] Ամմիանոս Մարկելլինոսը, նկարագրելով իսավրացիների զինված ելույթները հարավային փոքր Ասիայում 354 թ., նշում էր, որ նրանք տառապել են սովից (տե՛ս Ammianus. 1982, 20–21):

[100] de la Vaissière. 2015, 185.

[101] Priscus. 2014, 68.

*Կլիմայական փոփոխությունները IV դ. երկրորդ կես – V դ. սկզբներին*

II դ. կեսերը նշանավորեցին Ուշ Հոլոցենի կլիմայական շրջանի ավարտը, որը կոչվում էր «Հռոմեական կլիմայական օպտիմում» կամ «Հռոմեական ջերմային շրջան»: Սա ընդհանուր առմամբ տաք և խոնավ կլիմայական շրջան էր, որը գերիշխում էր Միջերկրածովյան ավազանում ու Մերձավոր Արևելքի մի հատվածում գրեթե չորս հարյուր տարի (Ք. ա. մոտ 200–150 – Ք. հ. 150–200 թթ.)[102]: V դ. կեսերից սկսվեց կլիմայական պեսիմումի մեկ այլ շրջան՝ այսպես կոչված, «ուշ անտիկ փոքր սառցե դարաշրջանը» (այլ կերպ անվանում են նաև «Վաղ միջնադարյան կլիմայական պեսիմում» կամ «Խավար դարի ցուրտ շրջան», մոտ 450–750 թթ.)[103]: 150-ից 450 թթ. միջև ընկած ժամանակահատվածը համարվում է «անցումային» (այլ կերպ անվանում են «Ուշ հռոմեական կլիմայական անցում») և ընդգրկում է մեր կողմից քննարկվող ժամանակահատվածը[104]:

Անցումային այս շրջանն առանձնանում է անկայուն կլիմայով՝ դեպի վատթարացող պայմաններ փոփոխությամբ[105]:

Թե՛ գրավոր, թե՛ հնագիտական աղբյուրները վկայում են Փոքր Ասիայի շրջանների մեծ մասում IV դ. և V դ. առաջին կեսին ավելի ցուրտ ու չոր պայմանների հաստատման մասին[106]: Մասնավորապես, Սոֆուլար քարանձավի հոսանստվածքային և Նար ու Թեջեր լճերի նստվածքային տվյալները ցույց են տալիս թերակղզու հյուսիսային և կենտրոնական հատվածում մոտ 300–350 թթ. սկսած շատ ավելի չորային պայմանների հաստատումը: Այստեղ տեղումները հասել են նվազագույն մակարդակի 350–470 թթ. ընթացքում[107], իսկ չորային պայմանների

---

[102] McCormick, Büntgen, Cane et al. 2012, 174–184; Harper. 2017, 39–54; Harper, McCormick. 2018, 33–34; Margaritelli, Cacho, Català et al. 2020, 5; Hu, Michel, Valensi et al. 2022.

[103] Büntgen, Myglan, Lyungqvist et al. 2016, 231–236; Büntgen, Crivellaro, Arseneault et al. 2022, 2336–2344; Harper, McCormick. 2018, 37–38; Margaritelli, Cacho, Català et al. 2020; Peregrine. 2020, 1643–1648. Միջերկրածովյան ավազանի Ուշ անտիկ շրջանի միջավայրային պատմության մասին՝ ընդարձակ գրականությամբ հանդերձ, տե՛ս McMahon, Sargent. 2019, 17–30, Eisenberg, Patterson, Kreiner et al. 2019, 31–50.

[104] Harper. 2019, 357.

[105] Harper. 2017, 14–15.

[106] Jones, Roberts, Leng et al. 2006, 361; England, Eastwood, Roberts et al. 2008, 1233; Izdebski, Pickett, Roberts et al. 2016, 189–208; Harper. 2017, 170; Xoplaki, Luterbacher, Luther et al. 2021, 537, 546, Figure 18.2. Տե՛ս նաև Haldon, Roberts, Izdebski et al. 2014, 124–127, Figure 1; Kaniewski, Paulissen, De Laet et al. 2007, 2212–2213; Telelis. 2008, 185, Figure 8; Manning. 2013, 163–164; Ocakoğlu, Dönmez, Akbulut et al. 2016, 217–218, Figure 12; Harper, McCormick. 2018, 30–33, Table 1.3; Labuhn, Finné, Izdebski et al. 2019, 248, 262, 265–266.

[107] Izdebski, Pickett, Roberts et al. 2016, 196–198, Figure 5, 204; Jacobson, Flohr, Gascoigne et al. 2021. Տե՛ս նաև Woodbridge, Roberts. 2011, 3386–3387, 3390; Kuzucuoğlu, Dörfler, Kunesch et al. 2011, 183,

գագաթնակետը եղել է մոտավորապես 400 թ. սահմաններում[108]: Փոքր Ասիայի հարավային շրջաններում չորային շրջան է գրանցվել նաև III–V դ. սկիզբ ընկած ժամանակահատվածում[109]: Այս շրջանը, որը տևել է մոտ 100–150 տարի, Ադամ Իզդեբսկին ու նրա գործընկերներն անվանել են «Ուշ հռոմեական գերերաշտ»[110]:

Նմանատիպ միտում է նկատվում նաև Լևանտում: IV դ. Մեռյալ ծովի ջրերի բարձրանալուց հետո լճի մակարդակի կտրուկ անկում է դիտվում մոտավորապես 400 թ. հետո[111]: Նույն ժամանակահատվածում զգալիորեն նվազել են Գալիլեայի ծովի ջրերը[112]: Հաջորդ դարի կեսերին Իսրայելում տեղումները նվազել են ավելի քան 50 տոկոսով (մինչև 300–400 մմ)՝ համեմատած I դ. մակարդակի հետ: Տեղումների կտրուկ նվազման գագաթնակետերից մեկը ևս գրանցվել է մոտ 400 թ.: II դարից հետո ավելի չորային պայմանների անցնելու միտումը նկատվում է նաև Իսրայելի Սորեկ քարանձավի հոսանստվածքային շերտերի տվյալներում[113]:

IV–V դդ. Իսպանիայի մեծ մասում և Իտալիայում արձանագրվել է չորային պայմանների աճ[114]: 360-ական թվականների կեսերն առանձնանում են խիստ երաշտային պայմաններով, որոնց հաջորդած օտար ցեղերի ներխուժումները լրջորեն խաթարեցին հռոմեական տիրապետությունը Բրիտանիայում[115]: Ի տարբերություն դրա՝ նույն ժամանակահատվածում համեմատաբար ավելի ցուրտ և շատ ավելի խոնավ պայմաններ են գերակշռել Հյուսիսային ու Կենտրոնական Եվրոպայում, Բալկանների մեծ մասում[116] և Փոքր Ասիայի հարավ ու հյուսիսարևմտյան շրջաններում[117]:

Ավելին՝ կլիմայական պայմանների վատթարացում է արձանագրվում երկրագնդի այլ գոտիներում ևս: Արևելյան տափաստանային գոտում և Ալթայի լեռնաշղթայում իրականացված կլիմայական ուսումնասիրությունները ցույց են տալիս

---

185; Manning. 2013, 161–162; Roberts, Cassis, Doonan et al. 2018, 315–316, Figure 5.

[108] Harper, McCormick. 2018, 30, Figure 1.10.

[109] Xoplaki, Luterbacher, Luther et al. 2021, 546–547.

[110] Izdebski, Pickett, Roberts et al. 2016, 204–205.

[111] Bookman, Enzel, Agnon et al. 2004, 566–570, Figure 8; Rambeau, Black. 2011, 100; Decker. 2024, 229. Հմմտ. նաև Harper, McCormick. 2018, 36, 38 և ծնթ. 123.

[112] Giaime, Artzy. 2022, Figure 5.

[113] Orland, Bar-Matthews, Kita et al. 2009, 34; Xoplaki, Luterbacher, Luther et al. 2021, 550; Decker. 2024, 229. Տե՛ս նաև Gichon. 2002, 187, Table 1.

[114] Labuhn, Finné, Izdebski et al. 2019, 265. Տե՛ս նաև Hu, Michel, Valensi et al. 2022.

[115] Norman, Schwinden, Krusic et al. 2025.

[116] Büntgen, Tegel, Nicolussi et al. 2011, 580–581, Figure 4; McCormick, Büntgen, Cane et al. 2012, 186; Harper. 2017, 169.

[117] Ülgen, Franz, Biltekin et al. 2012, 97; Jacobson, Flohr, Gascoigne et al. 2021.

ջերմաստիճանի անկում, երկարատև խիստ ձմեռներ և ցուրտ պայմանների հաստատում, որոնք գագաթնակետին են հասել մոտավորապես 350–370 թթ., ինչն էլ, ինչպես վերը նշվեց, հանգեցրել է հոների տեղաշարժերին դեպի արևմուտք[118]: Տիբեթական սարահարթը, Չինաստանի կենտրոնական շրջանները ականատես են եղել ամենադաժան, տասնամյակներ տևած երաշտին՝ մոտավորապես 340–380 թթ. միջև ընկած ժամանակահատվածում[119]: Արդյոք սրանք տարածաշրջանայի՞ն, թե՞ փոխկապակցված գլոբալ երևույթներ էին՝ մնում է անհայտ: Ամեն դեպքում, արեգակնային ակտիվության անկումը մոտ 370-ից մինչև 435 թթ.[120], ինչպես նաև Ատլանտյան ռեժիմի փոփոխությունները[121] կամ էլ Նինյո երևույթների կտրուկ աճը Խաղաղ օվկիանոսում, որը գագաթնակետին հասավ մոտ 350 թ.[122], կարող են վկայել կլիմայական շատ ավելի լայն՝ համաշխարհային ընդգրկում ունեցող երևույթի մասին[123]:

Արդյո՞ք այս բոլոր տվյալները կիրառելի են նաև IV դ. երկրորդ կեսից մինչև V դ. սկզբի Հայաստանի համար: Հայկական լեռնաշխարհին վերաբերող հնակլիմայական տվյալները, անշուշտ, դեռևս անբավարար են: Ներկայումս հիմնական աղբյուր շարունակում են մնալ Վան և Ծովք լճերի նստվածքային տվյալները: Որոշ նոր տվյալներ են հայտնի ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքից, հիմնականում նրա հյուսիսային ու հյուսիսարևելյան շրջաններից, ինչպես նաև հյուսիսարևմտյան Իրանի՝ Ուրմիա լճի շուրջ ընկած շրջաններից, որոնք նախկինում գտնվում էին հայոց Արշակունիների թագավորության կազմում:

Մասնավորապես, Վանա լճի ավազանի շրջանում չորային պայմանների աճ է նկատվում դեռևս 150 թ. սկսած՝ անցնելով ավելի չոր պայմանների մոտ 350 թ. հետո[124]: Այս տվյալները համապատասխանում են Տիգրիս գետի ակունքների շրջանում ընկած Ծովք լճի նստվածքային տվյալներին, որոնք կրկին ցույց են տալիս չորային պայմանների աճ՝ սկսած մոտ 350 թ.[125]: Ներկայիս Հայաստանի տարածքից (Շենկանի, Զարիշատ, Կալավանի Կարմիր լիճ և որոշ չափով նաև

[118] Schlütz, Lehmkuhl. 2007, 108, Figure 6, 114–115; Cook. 2013, 89–102; McCormick. 2013, 70–71; de la Vaissière. 2015, 189–190. Հոների հետագա ներհոսքը դեպի Կենտրոնական Եվրոպա V դ. առաջին կեսին համընկնում է Կարպատներում տիրող խիստ չորային շրջանի հետ, ուր հոներն այդ ընթացքում արդեն հաստատվել էին (տե՛ս Hakenbeck, Büntgen. 2022, 887–892):

[119] McCormick, Büntgen, Cane et al. 2012, 190; Cook. 2013, 89–92, Figure 1; Harper. 2017, 191–192; Harper, McCormick. 2018, 37.

[120] Manning. 2013, 133–134, Figure 9; Harper, McCormick. 2018, 19, Figure 1.1.

[121] Drake. 2017.

[122] Harper. 2017, 135, Figure 4.2, 163. Տե՛ս նաև Cook. 2013, 92–101.

[123] Տե՛ս Harper, McCormick. 2018, 14–20.

[124] Preiser-Kapeller. 2024, 332, Figure 12.7. Տե՛ս նաև Barlas Şimşek, Çağatay. 2018, 67.

[125] Biltekin, Eriş, Bulut. 2021, 78.

Վանեան) ստացված տվյալները վկայում են գերիշխող չորային պայմանների մասին Արշակունյաց դարաշրջանում՝ ընդհուպ մինչև 400 թ.[126]: Հյուսիսարևմտյան Իրանի Ուրմիա և Նեոր լճերի տվյալները նույնպես վկայում են ընդհանուր առմամբ ցուրտ ու չորային պայմանների մասին՝ մոտ 390 թ. սկսած, որոնք գերիշխել են մինչև V դ. կեսերը[127]: Ուրմիա լճի ջրերի ցածր մակարդակը նույնպես թվագրվում է այս ժամանակաշրջանով[128]: Կարելի է եզրակացնել, որ առկա տվյալները ցույց են տալիս քննարկվող ժամանակահատվածում Հայաստանում կլիմայական տեղաշարժերի ընդհանուր միտում՝ տեղումների նվազում և անցում դեպի ավելի չոր պայմաններ: Այս ամենը համահունչ է փոքրասիական ու լևանտյան՝ վերը ներկայացված հնակլիմայական տվյալներին, որոնք վկայում են IV դ. կեսերից սկսած Արևելամիջերկրածովյան ավազանում տիրապետող երկարատև երաշտային պայմանների մասին: Այս տվյալների համընկնումը չի կարող պատահական լինել[129]:

Այստեղ հավելենք նաև, որ Պատմահոր նշած կլիմայական անոմալ երևույթներից բացի, նման վկայություն է պահպանվել նաև Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ում: Նկարագրելով Պապի հրամանով հայր մարդպետի սպանությունը՝ նա հայտնում է, որ «և էին աւուրք ձմերայնոյ, և սաստկացեալ կցեալ էր գետն Եփրատ»[130]: Գետերի ջրերի սառչելը հաճախ հանդիպող երևույթ է, բայց Եփրատի (իմա՝ Արածանիի կամ Արևելյան Եփրատի) սառչելը, թերևս, բավական անսովոր էր՝ մատնանշվելու համար պատմիչի կողմից, և կարող է վկայել ձմեռային անսովոր ցածր ջերմաստիճանների մասին:

*Քննարկում*

Հայոց պատմության հիմնարար հարցերը, ըստ էության, երբեք չեն քննարկվել կլիմայական և շրջակա միջավայրի ուսումնասիրությունների լույսի ներքո[131]: Պատմական իրադարձությունների և կլիմայական կամ շրջակա միջավայրի փոփոխությունների միջև փոխհարաբերության վերաբերյալ վերջին բանավեճերը, միևնույն ժամանակ, կասկածներ են առաջացնում և ստիպում են զգուշորեն վերաբերվել պատմության ու կլիմայի կապին[132]: Այստեղ կարելի է մեջբերել Քայլ Հարփերի «Հռոմի ճակատագիրը. կլիմա, հիվանդություն և կայսրության ավար-

[126] Cromartie, Blanchet, Barhoumi et al. 2020, Figure 7; Joannin, Ali, Ollivier et al. 2014, 79–80; Joannin, Capit, Ollivier et al. 2022; Robles, Peyron, Brugiapaglia et al. 2022.

[127] Talebi, Ramezani, Djamali et al. 2016, 49. Տե՛ս նաև Alinezhad, Ramezani, Djamali et al. 2021, 607.

[128] Matloubkari, Shaikh Baikloo Islam. 2022, 64–68; Sharifi, Djamali, Peterson et al. 2023. Հմմտ. նաև Jacobson, Gascoigne, Fleitmann. 2024, 1127–1143.

[129] Տե՛ս Barlas Şimşek, Çağatay. 2018, 67–69.

[130] Բուզանդ. 1987, 292–293:

[131] Տե՛ս Քոսյան, Գրեկյան. 2024:

[132] Տե՛ս Manning. 2025.

տը» (2017) աշխատությունը և Հռոմեական կայսրության համար գրանցված անկման գործընթացներում կլիմայի դերի վերաբերյալ բանավեճերը[133]: Այդուհանդերձ, անկման նմանատիպ գործընթաց՝ կլիմայական և շրջակա միջավայրի փոփոխությունների զգալի դերակատարությամբ, ինչպես փորձեցինք վերը ցույց տալ, նկատելի է նաև ուշ Արշակունյաց Հայաստանում:

Ավելի ցուրտ և չորային պայմանների հաստատումը տեսանելի է տարբեր հնակլիմայաբանական տվյալներում և դրսևորվել է հատկապես IV դ. երկրորդ կես – V դ. սկզբներին: Ըստ երևույթին, երկարատև չորային պայմանները կենսապահովման ճգնաժամ են առաջացրել Հայկական լեռնաշխարհի առավել զգայուն՝ ցածրադիր շրջաններում, մասնավորապես՝ Արարատյան դաշտում ու շրջակայքում, այն է՝ արքունի ոստանում: Այս գոտին կլիմայական առումով խիստ խոցելի է. այն կիսաանապատային տարածք է, որտեղ տարեկան տեղումները չեն գերազանցում 200–300 մմ-ը, իսկ երկրագործությունը բացառապես հիմնված է արհեստական ոռոգման վրա[134]:

Բացի այդ, ի տարբերություն ներկայիս Հայաստանի հյուսիսային, հյուսիսարևելյան ու հարավարևելյան շրջանների, որոնք գտնվում են Սև ու Կասպից ծովերի անձրևային գոտու ամենահեռավոր սահմաններում, Այրարատում և դեպի արևմուտք՝ Եփրատ գետը՝ Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմանը ձգվող շրջաններում, տեղումների քանակը հիմնականում կախված է Ատլանտյան օվկիանոսում և Միջերկրական ծովում ձևավորվող արևմտյան ցիկլոններից[135]: Արևմուտքից արևելք ձգվող Արևելյան ու Ներքին Տավրոսի լեռնաշղթաները գործում են որպես բնական պատնեշ՝ կասեցնելով խոնավության ներթափանցումը, և զգալիորեն նվազեցնում են տեղումները բարձրավանդակի ներքին շրջաններում, մինչդեռ Պոնտոսի և Փոքր Կովկասի լեռները նույն դերն են խաղում լեռնաշխարհի հյուսիսում և հյուսիս-արևելքում: Ավելին, այսպես կոչված, «Հյուսիսատլանտյան տատանումը» լրացուցիչ ազդեցություն է ունենում տեղումների քանակի վրա՝ մեծապես ազդելով Տիգրիս և Եփրատ գետերի հոսանքի վրա[136]: Նույնը վերաբերում է նաև Արարատյան դաշտի համար ամենակարևոր ջրի աղբյուրը հանդիսացող Արաքսին: Վերջինս ձևավորվում է այն նույն ակունքային շրջանում՝ Վանա լճից հյուսիս, որտեղից սկիզբ են առնում Արևմտյան Եփրատը և Արածանին (Արևելյան Եփրատ): Սա կարող է բացատրել վերը նշված արևելամիջերկրածովյան և հայկական հնատվյալների միջև եղած կապը:

Երաշտը, ջրի պակասը, գետերի ցածր հոսքը կարող են անարդյունավետ դարձնել ոռոգման համակարգը[137]՝ էապես նվազեցնելով գյուղատնտեսական հո-

---

[133] Տե՛ս Erdkamp. 2019; Haldon, Elton, Huebner et al. 2018a; Haldon, Elton, Huebner et al. 2018b; Haldon, Elton, Huebner et al. 2018c.

[134] Գարբիելյան. 2000, 141:

[135] Türkeş. 1996, 1058–1059; Գաբրիելյան. 2000, 130–143, Barlas Şimşek, Çağatay. 2018, 57, 68–69.

[136] Cullen, deMenocal. 2000, 853–863.

[137] Արտաշատից գտնված հացահատիկային մնացորդների ուսումնասիրությունը վկայում է, որ այստեղ հավաքված բերքը հաճախ է ենթարկվել ջրի պակասի հարուցած խնդիրների (տե՛ս Orendi. 2024, 203):

ղերի արտադրողականությունը: Դա խնդիրներ էր առաջացնելու մեծ թվով բնակչության կենսապահովման համար: Արդյունքում՝ խիտ բնակեցված նախկին քաղաքային կենտրոնները կորցնում են իրենց բնակչությունը, նվազում է քաղաքների տնտեսական, առևտրա-արհեստագործական նշանակությունը և, ի վերջո, դրանք կամ վեր են ածվում փոքր գյուղատիպ բնակավայրերի կամ ընդհանրապես լքվում են:

